

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի սեպտեմբերի 23-ի

թիվ 799 որոշմամբ



ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՄ ՏԿ 009/2011

Օձանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին

Բովանդակություն

Հոդված 1. Կիրառման ոլորտը.....	4
Հոդված 2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի նույնականացման կանոնները.....	4
Հոդված 3. Եզրույթներ եվ սահմանումներ.....	5
Հոդված 4. Շուկայում շրջանառության կանոնները.....	11
Հոդված 5. Օժանելիքակոսմետիկական արտադրանքին ներկայացվող պահանջները.....	12
Հոդված 6. Համապատասխանության գնահատումը.....	25
Հոդված 7. Մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով.....	31
Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը.....	32
Հոդված 9. Պետական վերահսկողությունը.....	32
Հավելված 1 ՑԱՆԿ օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործման համար արգելված նյութերի.....	33
Հավելված 2 ՑԱՆԿ նյութերի, որոնք թույլատրված են օժանելիքակոսմետիկական արտադրանքի մեջ օգտագործման համար՝ հաշվի առնելով նշված սահմանափակումները.....	174
Հավելված 3 ՑԱՆԿ օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործելու համար թույլատրված ներկանյութերի.....	233
Հավելված 4 ՑԱՆԿ օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործելու համար թույլատրված կոնսերվանտների.....	291
Հավելված 5 ՑԱՆԿ օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործելու	

համար թույլատրված ուտրամանուշակագույն ֆիլտրերի	316
Հավելված 6 Օծանելիքակոսմետիկական արտադրանքի համար ջրածնային ցուցանիշի (pH) արժեքին ներկայացվող պահանջները	325
Հավելված 7 Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մանրէաբանական ցուցանիշները	328
Հավելված 8 Օծանելիքակոսմետիկական արտադրանքի թունաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները	330
Հավելված 9 Օծանելիքակոսմետիկական արտադրանքի կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշներին ներկայացվող պահանջները	334
Հավելված 10 Բերանի խոռոչի հիգիենայի միջոցների կլինիկական ցուցանիշներին ներկայացվող պահանջներ	337
Հավելված 11 Օծանելիքակոսմետիկական արտադրանքի մասին լրացուցիչ տեղեկությունների առկայության մասին վկայող պայմանանշան ...	339
Հավելված 12 Պետական գրանցման ենթակա օծանելիքակոսմետիկական արտադրանքի ցանկ.....	340

Հոդված 1. Կիրառման ոլորտը

1. Մաքսային միության (այսուհետ՝ ՄՄ) սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է ՄՄ անդամ պետությունների տարածքում շրջանառության մեջ դրվող՝ սպառողական տարայով օժանելիքակոսմետիկական արտադրանքի վրա:

2. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում կլլման, ինհալացիայի, ներարկման կամ մարդու մարմնում իմպլանտավորման համար նախատեսված արտադրանքի վրա, դաջվածքի այն միջոցների վրա, որոնց օգտագործումն առաջացնում է մաշկի ամբողջականության խախտում, ինչպես նաև հիվանդությունների ախտորոշման եւ բուժման համար կիրառվող արտադրանքի վրա:

3. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են արտադրանքին, ինչպես նաև դրա հետ կապված արտադրության գործընթացներին ներկայացվող պահանջները՝ մարդու կյանքի եւ առողջության, գույքի պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև դրա նշանակության եւ անվտանգության առումով սպառողին մոլորեցնող գործողությունները կանխելու նպատակներով:

Հոդված 2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի նույնականացման կանոնները

1. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով նույնականացումն իրականացվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքը բնութագրող եւ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված հատկանիշներով:

2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքը բնութագրող հատկանիշներն են.

– արտադրանքի օգտագործման եղանակը՝ օժանելիքակոսմետիկական

արտադրանքը նախատեսված է մարդու մարմնի որոշակի մասերի վրա բացառապես արտաքին օգտագործման համար,

– արտադրանքի օգտագործման հատվածը՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքն օգտագործվում է մաշկի, մազերի, եղունգների, շուրթերի, ատամների, բերանի խոռոչի լորձաթաղանթի եւ արտաքին սեռական օրգանների հատվածում,

– արտադրանքի օգտագործման նպատակները (առանձին կամ ցանկացած համակցությամբ)՝ մաշկը, մազերը, եղունգները, շուրթերը, ատամները, բերանի խոռոչի լորձաթաղանթը եւ արտաքին սեռական օրգանները մաքրելը եւ (կամ) դրանց արտաքին տեսքը փոփոխելը՝ առանց դրանց ամբողջականությունը խախտելու, դրանց հաճելի հոտ հաղորդելը եւ (կամ) հոտը կարգավորելը, դրանք նորմալ ֆունկցիոնալ վիճակում պահելը:

3. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի նույնականացումը ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով իրականացվում է փաստաթղթային հիմնավորմամբ: Որպես փաստաթղթային հիմնավորում կարող են օգտագործվել տեխնիկական փաստաթղթերը եւ (կամ) մատակարարման պայմանագրերը եւ (կամ) մասնագրերը եւ (կամ) պիտակները եւ (կամ) անոտացիաները եւ արտադրանքը բնութագրող այլ փաստաթղթեր:

Հոդված 3. Եզրույթներ եվ սահմանումներ

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները եւ դրանց սահմանումները.

ամպուլային կոսմետիկա՝

հերմետիկորեն հալափակված ապակե (պոլիմերային) անոթում բաժնեծրարված օժանելիքակոսմետիկական արտադրանք՝ նախատեսված մեկանգամյա օգտագործման համար,

օճանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգություն՝ օճանելիքակոսմետիկական արտադրանքի այն հատկանիշների եւ բնութագրերի ամբողջությունը, որոնք ապահովում են օճանելիքակոսմետիկական արտադրանքի վնասակար ազդեցության բացակայությունը սպառողի վրա՝ պիտանիության ժամկետում նշանակությանը եւ օգտագործման եղանակին համապատասխան այն օգտագործելու դեպքում,

երկրորդային փաթեթվածք՝ փաթեթվածք, որում զետեղվում է օճանելիքակոսմետիկական արտադրանքն առաջնային, սակայն ոչ տրանսպորտային փաթեթվածքով,

շրջանառության մեջ դնել՝ այն պահը (այդ թվում՝ առաջին օֆերտան), որից սկսած արտադրողը կամ վաճառողը (ներմուծողը) նախատեսում է արտադրանքը վաճառքի կամ այլ եղանակով սպառողներին հանձնել ՄՄ անդամ պետությունների տարածքում,

արտադրող՝ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որն արտադրում է օճանելիքակոսմետիկական արտադրանք եւ (կամ) շրջանառության մեջ դնում օճանելիքակոսմետիկական արտադրանքն իր անվանմամբ եւ (կամ) ապրանքային նշանով եւ պատասխանատվություն է կրում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար,

ներմուծող՝ ՄՄ անդամ պետության ռեզիդենտ, որը ՄՄ անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է օճանելիքակոսմետիկական արտադրանքի փոխանցման, այդ օճանելիքակոսմետիկական արտադրանքի իրացման արտաքին առետրային պայմանագիր եւ պատասխանատվություն է կրում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար,

օճանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրամաս (բաղադրամաս)՝ սինթետիկ կամ բնական ծագում ունեցող նյութ կամ նյութերի խառնուրդ, որն օգտագործվում է օճանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության

համար: Բաղադրամասեր չեն համարվում բաղադրամասերում առկա խառնուկները, ինչպես նաև այն նյութերը, որոնք օգտագործվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության գործընթացում եւ առկա չեն պատրաստի արտադրանքում,

կոնսերվանտներ՝ սինթետիկ եւ (կամ) բնական ծագում ունեցող նյութեր, որոնք ապահովում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի կայունությունը մանրէական աղտոտման նկատմամբ պիտանիության ժամկետի ընթացքում,

դեկորատիվ կոսմետիկա՝ դեմքի, աչքերի, շուրթերի, հոնքերի, մարմնի եւ մազերն ու եղունգները ներկելու համար նախատեսված օժանելիքակոսմետիկական արտադրանք,

մանկական կոսմետիկա՝ մինչեւ 14 տարեկան երեխաների համար նախատեսված օժանելիքակոսմետիկական արտադրանք,

ինտիմ կոսմետիկա՝ արտաքին սեռական օրգանների եւ դրանց հարակից մարմնի հատվածների խնամքի համար նախատեսված օժանելիքակոսմետիկական արտադրանք,

պրոֆեսիոնալ կոսմետիկա՝ օժանելիքակոսմետիկական արտադրանք, որը նախատեսված է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից օգտագործման համար՝ վարսավիրական եւ (կամ) կոսմետիկական ծառայություններ մատուցելիս,

կոսմետիկա դաջվածքի համար՝ օժանելիքակոսմետիկական արտադրանք, որը նախատեսված է ոչ ներարկումային եղանակով մաշկը նկարապատելու համար,

ներկանյութեր՝ սինթետիկ կամ բնական ծագում ունեցող քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օժանելիքակոսմետիկական արտադրանքի գունավորման համար կամ ներառված են մաշկի, մազաձածկույթի եւ եղունգների գունավորման համար նախատեսված օժանելիքակոսմետիկական արտադրանքի

բաղադրության մեջ,

օժանելիքակոսմետիկական արտադրանքի մակնշում (մակնշվածք)՝ սպառողական տարայի, պիտակի, ապրանքապիտակի վրա գրառման, թվային, գունային եւ գրաֆիկական նշագրումների տեսքով զետեղվող տեղեկություններ սպառողի համար,

օժանելիքակոսմետիկական արտադրանքի անուն՝ արտադրողի կողմից արտադրանքին տրված բառային եւ (կամ) թվային նշում,

օժանելիքակոսմետիկական արտադրանքի նշանակություն՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքի այն ֆունկցիոնալ հատկությունը, որով կոնկրետանում է դրա օգտագործման ոլորտը,

օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվանում՝ համասեռ օժանելիքակոսմետիկական արտադրանքի տեսակի նշում (ատամի մածուկ, լոսյոն, օժանելիք, կրեմ եւ նմ.),

նանոնյութ՝ չլուծվող կամ կենսակայուն եւ հատուկ արտադրված նյութ՝ մեկից ոչ պակաս արտաքին չափսով կամ 1-ից 100 նմ սահմաններում ներքին կառուցվածքով,

համասեռ օժանելիքակոսմետիկական արտադրանք՝ նման բաղադրակազմ ունեցող եւ միեւնոյն պահանջներին համապատասխանող՝ նույնանուն արտադրանք,

օժանելիքակոսմետիկական արտադրանք (ՕԿԱ)՝ նյութ կամ նյութերի խառնուրդ՝ նախատեսված մարդու արտաքին ծածկույթին (մաշկին, մազածածկույթին, եղունգներին, շուրթերին եւ արտաքին սեռական օրգաններին) կամ ատամներին եւ բերանի խոռոչի լորձաթաղանթին անմիջականորեն քսելու համար՝ դրանք մաքրելու, դրանց արտաքին տեսքը փոխելու, հաճելի հոտ հաղորդելու եւ (կամ) մարմնի հոտը կարգավորելու եւ (կամ) պաշտպանելու եւ (կամ) լավ վիճակում պահելու եւ (կամ) դրանք խնամելու միակ կամ գլխավոր

նպատակով,

առաջնային փաթեթվածք՝ փաթեթվածք, որն անմիջականորեն շփվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքի հետ,

պիլինգ՝ կերատոլիտիկ (եղջերալուծիչ) միջոցների օգնությամբ վերնամաշկի մակերեսային բջիջների հեռացման համար նախատեսված օժանելիքակոսմետիկական արտադրանք,

օժանելիքակոսմետիկական արտադրանքի սպառողական տարա՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքի առաջնային փաթեթվածք կամ առաջնային եւ երկրորդային փաթեթվածքի ամբողջություն, որն օժանելիքակոսմետիկական արտադրանքի հետ հասնում է սպառողին եւ չի կատարում տրանսպորտային տարայի ֆունկցիա,

փորձանմուշ՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ փոքր քանակներով բաժնեծրարված եւ (կամ) պարզեցված փաթեթվածքով ներկայացված նմուշ, որը նախատեսված է փորձաստուգման եւ փորձարկման համար,

բաղադրագիր՝ օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ մտնող բաղադրամասերի՝ արտադրողի կողմից հաստատված ամբողջական ցանկ՝ բաղադրամասերի զանգվածային մասի նշումով,

սաշե (բույրաբարձիկ)՝ մեկանգամյա օգտագործման օժանելիքակոսմետիկական արտադրանք՝ սպառողական տարայով,

բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ՝ հիգիենիկ եւ (կամ) պրոֆիլակտիկ ազդեցությամբ օժանելիքակոսմետիկական արտադրանք, որը նախատեսված է ատամների, լնդերին եւ բերանի խոռոչի լորձաթաղանթին անմիջականորեն քսելու համար՝ դրանք մաքրելու, բուրավետացնելու, դրանց արտաքին տեսքը փոխելու, դրանք պաշտպանելու, լավ վիճակում պահելու միակ կամ գլխավոր նպատակով,

պիտանիության ժամկետ՝ ժամանակահատված, որը լրանալուց հետո

օժանելիքակոսմետիկական արտադրանքը համարվում է ըստ նշանակության օգտագործելու համար ոչ պիտանի: Պիտանիության ժամկետը սահմանվում է արտադրանքը արտադրողի կողմից՝ տեխնիկական փաստաթղթերում: Պիտանիության ժամկետի ընթացքում արտադրողը պարտավոր է երաշխավորել արտադրանքի համապատասխանությունը սպառողի կյանքի եւ առողջության անվտանգության պահանջներին եւ պահպանման պայմանները պահպանելու դեպքում՝ սպառողական հատկանիշների պահպանումը:

օժանելիքակոսմետիկական արտադրանքի պահպանման ստանդարտ պայմաններ՝ պահպանման ջերմաստիճանը հեղուկ արտադրատեսակների համար՝ 5°C–ից ոչ ցածր եւ 25°C–ից ոչ բարձր, ձեռքի պինդ օճառի համար՝ մինուս 5°C–ից ոչ ցածր, մնացած օժանելիքակոսմետիկական արտադրանքի համար՝ 0°C–ից ոչ ցածր եւ 25°C–ից ոչ բարձր, արեւային լույսի անմիջական ազդեցության բացակայություն:

տեխնիկական փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնց համաձայն իրականացվում են օժանելիքակոսմետիկական արտադրանքի պատրաստումը, պահպանումը, փոխադրումը (տեխնիկական պայմաններ, ստանդարտներ, տեխնոլոգիական հրահանգներ, բաղադրագրեր, մասնագրեր եւ այլն):

տրանսպորտային տարա՝ սպառողական տարայով օժանելիքակոսմետիկական արտադրանքի փաթեթավորման, պահպանման եւ փոխադրման համար նախատեսված՝ ինքնուրույն տրանսպորտային միավոր հանդիսացող տարա:

արտադրողի լիազոր ներկայացուցիչ՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը սահմանված կարգով գրանցված է ՄՄ անդամ պետությունում եւ լիազորված է արտադրողի կողմից՝ համապատասխանության հաստատման դեպքում իր անունից գործունեություն իրականացնելու եւ օժանելիքակոսմետիկական արտադրանքը շուկայում շրջանառության մեջ դնելու համար, եւ պատասխանատվություն է կրում ՄՄ սույն Տեխնիկական

կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար.

ՈԻՄ ֆիլտր (ուլտրամանուշակագույն ֆիլտր)՝ արտորբցիայի, անդրադարձման կամ ցրման միջոցով մաշկն ուլտրամանուշակագույն ճառագայթման թափանցումից պաշտպանելու համար նախատեսված նյութ.

պիտակ՝ փաթեթավորված օժանելիքակոսմետիկական արտադրանքի մասին տեղեկատվության միջոց, որը զետեղվում է սպառողական տարայի վրա.

ապրանքապիտակ՝ կամայական ձեւի, չափսերի եւ նյութից պատրաստվածք, որը նախատեսված է մակնշում կատարելու համար, ամրացվում է կամ կցվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքի միավորին կամ զետեղվում է փաթեթվածքի մեջ:

Հոդված 4. Շուկայում շրջանառության կանոնները

1. Օժանելիքակոսմետիկական արտադրանքը շուկայում շրջանառության մեջ է դրվում դրա սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ այլ այնպիսի տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության դեպքում, որոնց պահանջները տարածվում են դրա վրա՝ առանց օժանելիքակոսմետիկական արտադրանքին ներկայացվող՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգում զետեղված պահանջների վերաբերմամբ լրացուցիչ պահանջներ ներկայացնելու եւ առանց համապատասխանության գնահատման (հաստատման) լրացուցիչ ընթացակարգեր իրականացնելու:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող օժանելիքակոսմետիկական արտադրանքը չի կարող մակնշվել Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով եւ չի թույլատրվում շուկայահանման:

Հոդված 5. Օժանելիքակոսմետիկական արտադրանքին ներկայացվող պահանջները

1. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգությունն ապահովվում է պահանջների ամբողջությամբ, որոնք ներկայացվում են՝

- 1) բաղադրությանը,
- 2) ֆիզիկաքիմիական ցուցանիշներին,
- 3) մանրէաբանական ցուցանիշներին,
- 4) թունավոր տարրերի պարունակությանը,
- 5) թունաբանական ցուցանիշներին,
- 6) կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշներին,
- 7) արտադրությանը,
- 8) սպառողական տարային,
- 9) արտադրանքի մակնշմանը:

2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրությանը ներկայացվող պահանջները

2.1. արգելվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործել 1-ին հավելվածով նախատեսված նյութերը,

2.2. թույլատրվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործել 2-րդ հավելվածով նախատեսված նյութերը՝ հաշվի առնելով նշված սահմանափակումները,

2.3. թույլատրվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործել 3-րդ հավելվածով նախատեսված ներկանյութերը,

2.4. թույլատրվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործել 4-րդ հավելվածով նախատեսված կոնսերվանտները,

2.5. թույլատրվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքում օգտագործել 4-րդ հավելվածով նախատեսված ուլտրամանուշակագույն ֆիլտրերը:

2.6. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ 1-ից 5-րդ հավելվածներում ներկայացված բաղադրամասերի ցանկերն արդիականացվում են սահմանված կարգով:

3. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի ֆիզիկաքիմիական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

6-րդ հավելվածում նշված օժանելիքակոսմետիկական արտադրանքի համար ջրածնի ցուցանիշի (pH) արժեքը պետք է համապատասխանի տվյալ հավելվածով սահմանված նորմային:

Բերանի խոռոչի հիգիենայի՝ ֆտորի պարունակությամբ միջոցների համար ֆտորիդի պարունակությունը (ֆտորի մոլային զանգվածի վերահաշվարկով) պետք է համապատասխանի 2-րդ հավելվածում զետեղված պահանջներին:

4. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի մանրէաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները

4.1. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի մանրէաբանական ցուցանիշները պետք է համապատասխանեն 7-րդ հավելվածում զետեղված պահանջներին:

4.2. Մանրէաբանական ցուցանիշներ չեն սահմանվում օժանելիքակոսմետիկական արտադրանքի հետեւյալ տեսակների համար.

1) ըստ ծավալի 25 %-ից ավելի կոնցենտրացիայով էթիլային սպիրտ եւ (կամ) օրգանական լուծիչներ պարունակող օժանելիքակոսմետիկական արտադրանք, որն օգտագործվում է առանց նոսրացման.

2) եղունգների լաքեր՝ բացի ջրային հիմքով եղունգների լաքերից.

3) հոտազերծիչներ, հոտազերծիչ հակաքրտնքային միջոցներ, հակաքրտնքային միջոցներ.

4) մազերի օքսիդացնող ներկեր, գունաբացման եւ գունաշերտավորման միջոցներ.

5) մազերի քիմիական գանգրացման միջոցներ եւ մազերի ուղղման միջոցներ՝ թիուլային միացությունների հիմքով.

6) դեպիլյացիայի միջոցներ՝ թիոգլիկոլային թթվի հիմքով.

7) ձեռքի պինդ օճառ՝ ճարպային հիմքով.

8) չոր մատիտներ.

9) լոգանքի աղեր.

10) 100%-անոց եթերայուղեր.

11) ատամների սպիտակեցման միջոցներ, որոնք պարունակում են ջրածնի պերօքսիդ կամ ջրածնի պերօքսիդ անջատող այլ բաղադրիչներ, այդ թվում՝ կարբամիդի պերօքսիդ եւ ցինկի պերօքսիդ՝ ջրածնի պերօքսիդի (որպես բաղադրամաս կամ անջատվող նյութ) 0,1%-ից 6,0% կոնցենտրացիայով.

12) սափրման միջոցներ (կրեմներ, գելեր եւ այլն), որոնց pH ջրածնային ցուցանիշը 10,0-ից բարձր է:

5. Թունավոր տարրերի պարունակությանը ներկայացվող պահանջները

Այն օճանելիքակոսմետիկական արտադրանքում, որի բաղադրության մեջ ներառված բնական բուսական կամ բնական հանքային ծագման հումքի քանակը 1%-ից ավել է, թունավոր տարրերի պարունակությունը չպետք է գերազանցի՝ մկնդեղ՝ 5,0 մգ/կգ-ը, սնդիկ՝ 1,0 մգ/կգ-ը, կապար՝ 5,0 մգ/կգ-ը:

6. Օճանելիքակոսմետիկական արտադրանքի թունաբանական եւ կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշներին ներկայացվող պահանջները

6.1. Ըստ նշանակության օգտագործելու դեպքում օճանելիքակոսմետիկական

արտադրանքը մարդու համար պետք է լինի անվտանգ:

6.1.1. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի թունաբանական ցուցանիշները պետք է համապատասխանեն 8-րդ հավելվածում զետեղված պահանջներին:

6.1.2. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշները պետք է համապատասխանեն 9-րդ հավելվածում զետեղված պահանջներին:

6.1.3. Բերանի խոռոչի հիգիենայի միջոցների կլինիկական ցուցանիշները պետք է համապատասխանեն 10-րդ հավելվածում զետեղված պահանջներին:

6.1.4. Միեւնոյն անվանմամբ եւ անունով, միեւնոյն տեխնիկական փաստաթղթի համաձայն պատրաստված, սակայն երանգով տարբերվող դեկորատիվ կոսմետիկայի, այդ թվում՝ եղունգների լաքերի, ինչպես նաեւ մազերը ներկող եւ երանգավորող միջոցների թունաբանական փորձարկումներն իրականացվում են ամբողջ ծավալով, ուսումնասիրության ներկայացված երանգների առնվազն 30 տոկոսի ընտրանքի վրա: Ուսումնասիրվող փորձանմուշները պետք է պարունակեն յուրաքանչյուր կոնկրետ ներկանյութի առավելագույն քանակություն: Ուսումնասիրության ներկայացված մնացած երանգների համար որոշվում է միայն զգայունացնող ազդեցությունը:

6.1.5. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի թունաբանական եւ կլինիկական (կլինիկալաբորատոր) ցուցանիշները որոշվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) ֆիզիկաքիմիական եւ մանրէաբանական ցուցանիշներով արտադրանքի փորձարկումներից դրական արդյունքներ ստանալուց հետո:

7. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը ներկայացվող պահանջները

7.1. Արտադրության գործընթացներին ներկայացվող պահանջները

Արտադրության գործընթացում օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է՝

իրականացնել դրա արտադրությունը սույն Տեխնիկական կանոնակարգի 7.2 կետի պահանջներին համապատասխան.

իրականացնել արտադրանքի արտադրությունը սույն Տեխնիկական կանոնակարգի 7.3 կետի պահանջներին համապատասխանող արտադրական շինություններում.

օգտագործել սույն Տեխնիկական կանոնակարգի 7.4 կետի պահանջներին համապատասխանող սարքավորումներ եւ գույք.

արտադրանքի արտադրությանը մասնակցելու թույլատրել սույն Տեխնիկական կանոնակարգի 7.5 կետի պահանջներին համապատասխանող անձնակազմ.

7.2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության ապահովումը դրա արտադրության գործընթացում

Օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգությունը դրա արտադրության եւ շրջանառության գործընթացում ապահովվում է հետեւյալի միջոցով.

– արտադրանքի արտադրության՝ արտադրանքի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տեխնոլոգիական գործընթացների ընտրություն.

– արտադրության՝ հումքի, փաթեթավորման նյութերի, չբաժնեծրարված արտադրանքի եւ պատրաստի արտադրանքի աղտոտումը բացառող տեխնոլոգիական գործընթացների հաջորդականության եւ հոսքայնության ընտրություն.

– արտադրական հսկողության ծրագրերում տեխնոլոգիական գործընթացների եւ արտադրանքի հսկվող փուլերի սահմանում դրա

արտադրության փուլերում .

– հումքի, տեխնոլոգիական միջոցների եւ արտադրանքի արտադրության ընթացքում օգտագործվող օժանդակ նյութերի նկատմամբ հսկողության իրականացում, ինչպես նաեւ չբաժնեծրարված եւ պատրաստի արտադրանքի նկատմամբ հսկողության իրականացում՝ հսկողության անհրաժեշտ արժանահավատությունը եւ լիարժեքությունն ապահովող միջոցներով.

– հումքին, փաթեթավորման նյութերին, ընդունման չափանիշներին, խոտանի կամ աննշան թերությունների դեպքում ձեռնարկվող միջոցառումներին, փոխադրման պայմաններին ներկայացվող պահանջների սահմանում.

– տեխնոլոգիական սարքավորումների աշխատանքի նկատմամբ հսկողության իրականացում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող արտադրանքի արտադրությունն ապահովող կարգով.

– տեխնոլոգիական գործընթացների հսկվող փուլերի եւ օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ դրա արտադրության փուլերում հսկողության արդյունքների մասին տեղեկությունների փաստաթղթավորման ապահովում.

– հաշվառում եւ գրանցում յուրաքանչյուր փուլի համար տեխնոլոգիական գործողությունների մասին մանրամասն նշումով (ավելացվող հումքի, ջերմաստիճանների, արագությունների, միախառնման ժամանակի, փորձանմուշներ վերցնելու, սարքավորումները մաքրելու, սանիտարական մշակման ենթարկելու մասին նշում, անհրաժեշտության դեպքում, եւ չբաժնեծրարված արտադրանքի փոխանցման մասին նշում).

– արտադրանքի պահպանման պայմանների պահպանում.

– արտադրանքի արտադրության գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի պահպանում այնպիսի վիճակում, որով բացառվում է արտադրանքի աղտոտումը.

– աշխատողների կողմից անձնական հիգիենայի կանոնների պահպանման միջոցների ընտրություն՝ արտադրանքի անվտանգությունն ապահովելու նպատակներով.

չբաժնեծրարված եւ պատրաստի արտադրանքի անվտանգությունն ապահովող միջոցների կիրառում եւ օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրում, լվացում, ախտահանում, միջատազերծում եւ կրծողների ոչնչացում (դերատիզացիա) իրականացնելու պարբերականության սահմանում.

– սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրված արտադրանքի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի վարում եւ պահպանում փաստաթղթային եւ (կամ) էլեկտրոնային կրիչների վրա.

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի հետազօծելիություն.

– պատրաստի արտադրանքի նկատմամբ հսկողության իրականացում նախքան դրա շուկայահանումը՝ սահմանված ընդունման չափանիշներին համապատասխանության փորձարկման մեթոդների համաձայն.

– արխիվային նմուշների պահպանում օժանելիքակոսմետիկական արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակից:

7.3. Այն արտադրական շինություններին ներկայացվող պահանջները, որտեղ իրականացվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության գործընթացը:

Արտադրական շինությունները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին.

– արտադրական շինություններում տեղադրված օդափոխման եւ (կամ) օդորակման համակարգերը պետք է ապահովեն այնպիսի օդի մուտք

արտադրական շինություններ, որը չի կարող լինել արտադրանքի աղտոտման աղբյուր.

– արտադրական շինություններում տեղադրված լուսավորման համակարգերը պետք է ապահովեն բոլոր բեկորների տեղայնացման հնարավորությունը եւ ապահովեն դրանց՝ արտադրանք ներթափանցելու կանխումը, ինչպես նաեւ չպետք է լինեն արտադրանքի աղտոտման աղբյուր.

– անձնակազմի համար նախատեսված, անձնակազմի անձնական եւ արտադրական (հատուկ) հագուստի պահման համար նախատեսված հանդերձարանները չպետք է գտնվեն արտադրական շինություններում.

– զուգարանները չպետք է գտնվեն արտադրական շինություններում, զուգարանի դռները չպետք է անմիջականորեն բացվեն արտադրական շինություններ.

– արտադրական շինությունների հատակագծումը հնարավորություն տա ապահովելու տեխնոլոգիական գործընթացների այնպիսի հաջորդականություն եւ հոսքայնություն, որտեղ բացառվում են հումքի, չբաժնեծրարված եւ պատրաստի արտադրանքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպական կամ խաչաձեւ հոսքերը, եթե դա անհրաժեշտ է արտադրանքի աղտոտումը կանխելու համար.

– արտադրական շինությունները պետք է կառուցված լինեն այնպես, որ ապահովեն պաշտպանություն կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների մուտքից.

– արտադրական շինությունները պետք է կառուցված լինեն այնպես, որ բացառվեն այնպիսի գոտիների առկայությունը, որտեղից հնարավոր չէ հեռացնել կեղտը, կոնդենսատը, բորբոսը եւ արտադրանքի աղտոտման այլ նմանատիպ աղբյուրներ.

– հատակների կառուցվածքով պետք է բացառվի ջրի կուտակումն արտադրական շինություններում.

– հատակների, պատերի եւ դռների մակերեսայինները պետք է պատրաստված լինեն անջրանցիկ, լվացվող եւ ոչ թունավոր նյութերից, որոնք կարելի է ենթարկել սանիտարական մշակման եւ ախտահանման.

– առաստաղներով (առաստաղների բացակայության դեպքում՝ տանիքի ներքին մակերեսային) եւ արտադրական շինությունների վրա գտնվող կառույցներով պետք է բացառվի որեւէ մասնիկի կամ կոնդենսատի թափանցումն արտադրանքի մեջ.

– բացվող պատուհանները (վերնափեղկերը) պետք է սարքավորված լինեն միջատներից պաշտպանող ցանցերով.

– կոյուղու սարքավորումներն արտադրական շինություններում պետք է նախագծված եւ տեղադրված լինեն այնպես, որ բացառվի արտադրանքի աղտոտման ռիսկը:

7.3.2. Արտադրական շինություններում չի թույլատրվում պահել ցանկացած նյութ, որը չի օգտագործվում օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության մեջ՝ բացառությամբ լվացող եւ ախտահանող միջոցների: Լվացող եւ ախտահանող միջոցները թույլատրվում է պահել արտադրական շինությունների հատուկ հատկացված գոտիներում:

7.4. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումներին եւ գույքին ներկայացվող պահանջները

7.4.1. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումները եւ գույքը պետք է՝

– հնարավորություն տան իրականացնելու դրանց սանիտարական մշակումն ու ախտահանումը.

– պատրաստվեն արտադրանքի աղտոտման աղբյուր չհանդիսացող նյութերից:

7.4.2. Տեխնոլոգիական սարքավորումները պետք է հազեցած լինեն համապատասխան հսկողության սարքերով, եթե դա անհրաժեշտ է սույն Տեխնիկական կանոնակարգի նպատակներին հասնելու համար:

7.5. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության գործընթացում ընդգրկված աշխատողներին ներկայացվող պահանջները

7.5.1. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի՝ հումքի, չբաժնեծրարված եւ պատրաստի արտադրանքի, նյութերի եւ գույքի հետ անմիջական շփման միջոցով իրականացվող արտադրության գործընթացում ընդգրկված այն աշխատողները, որոնք շփվում են արտադրանքի (հումքի) հետ, պետք է պահպանեն անձնական հիգիենան, կրեն մաքուր հատուկ արտադրական հագուստ եւ կոշիկ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է, որպեսզի չհանդիսանան արտադրանքի աղտոտման աղբյուր:

7.5.2. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության գործընթացում ընդգրկված աշխատողներին արգելվում է արտադրական շինություններ բերել այնպիսի առարկաներ, որոնք չեն օգտագործվում ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ եւ կարող են դառնալ արտադրանքի աղտոտման աղբյուր, ծխել եւ սնունդ ընդունել այդ շինություններում:

8. Օձանելիքակոսմետիկական սպառողական տարային ներկայացվող պահանջները

8.1. Սպառողական տարան պետք է ապահովի օձանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգությունն ու պահպանումը արտադրանքի պիտանիության ժամկետի ընթացքում:

9. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի մակնշմանը ներկայացվող պահանջները

9.1. Օձանելիքակոսմետիկական արտադրանքի մակնշումն իրականացվում է

սպառողական տարայի, պիտակի, ապրանքապիտակի վրա մակագրությունների, թվային եւ գրաֆիկական նշանների տեսքով սպառողների համար տեղեկություններ զետեղելու միջոցով՝ հաշվի առնելով մակնշմանը ներկայացվող՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ հավելվածներում նշված պահանջները: Եթե առկա են օժանելիքակոսմետիկական արտադրանքին կից տեղեկություններ (ապրանքապիտակ), ապա արտադրանքի վրա զետեղվում է գրաֆիկական նշան բաց գրքի վրա դաստակի տեսքով (հավելված 11):

9.2. Օժանելիքակոսմետիկական արտադրանքի մակնշումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի անվանումը, անունը (առկայության դեպքում).

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի նշանակությունը, եթե դա չի բխում արտադրանքի անվանումից.

– երեխաների համար նախատեսված կոսմետիկայի դեպքում մակնշումը պետք է պարունակի համապատասխան տեղեկություններ.

– արտադրողի անվանումը եւ նրա գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը).

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի ծագման երկիրը (եթե այն երկիրը, որտեղ տեղակայված է արտադրությունը, չի համընկնում արտադրողի իրավաբանական հասցեի հետ).

– այն կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), որը արտադրողի կողմից լիազորված է ընդունելու բոլորքներ սպառողի կողմից (արտադրողի լիազոր ներկայացուցիչ կամ ներմուծող), եթե արտադրողն ինքը բոլորքներ չի ընդունում ՄՄ անդամ պետության տարածքում.

– արտադրանքի անվանական քանակը (ծավալը կամ զանգվածը) սպառողական տարայում (ձեռքի պինդ օճառի համար՝ մեկ կտորի անվանական

զանգվածը փաթեթավորման պահին՝ բացառությամբ 5 գրամից պակաս անվանական քաշով կամ 5 միլիլիտրից պակաս անվանական ծավալով օծանելիքակոսմետիկական արտադրանքի կամ օծանելիքակոսմետիկական արտադրանքի փորձանմուշի.

– գույնը եւ (կամ) երանգը (դեկորատիվ կոսմետիկայի եւ ներկող միջոցների համար).

– ֆտորի զանգվածային մասը (% կամ մգ/կգ կամ ppm) բերանի խոռոչի հիգիենայի՝ ֆտորի միացություններ պարունակող միջոցների համար.

– պիտանիության ժամկետը՝

պատրաստման ամսաթիվը (ամիս, տարի) եւ պիտանիության ժամկետը (ամիս, տարի) կամ «պիտանի է մինչեւ» (ամիս, տարի) կամ «օգտագործել մինչեւ» (ամիս, տարի) մակագրությունը.

– պահպանման պայմանների նկարագրությունը, եթե այդ պայմանները տարբերվում են ստանդարտ պայմաններից.

– հատուկ նախազգուշական միջոցներ (անհրաժեշտության դեպքում) արտադրանքն օգտագործելիս, այդ թվում՝ տեղեկություններ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 2–ից 5–րդ հավելվածներում զետեղված նախազգուշացումների մասին.

– խմբաքանակի համարը կամ հատուկ կոդը, որոնցով հնարավոր է նույնականացնել օծանելիքակոսմետիկական արտադրանքի խմբաքանակը.

– օծանելիքակոսմետիկական արտադրանքի օգտագործման եղանակների մասին տեղեկությունները, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել սպառողի կողմից օծանելիքակոսմետիկական արտադրանքի սխալ օգտագործմանը.

– բաղադրամասերի ցանկը՝ սույն հոդվածի 9.3 կետին համապատասխան.

9.3. Բաղադրամասերի ցանկին պետք է նախորդի «Բաղադրամասեր» կամ «Բաղադրություն» վերնագիրը:

Բաղադրամասերը նշվում են բաղադրագրում իրենց զանգվածային մասի նվազման կարգով, միեւնույն ժամանակ օժանելիքային (անուշահոտ) կազմությունը նշվում է որպես ընդհանուր բաղադրամաս՝ առանց վերջինիս բաղադրությունը ներկայացնելու: Եթե բաղադրակազմում ներառված են 2-րդ հավելվածում նշված բաղադրամասերը (թիվ 67-ից 92), եւ դրանց պարունակությունը լվացվող արտադրանքի համար գերազանցում է 0,01% կոնցենտրացիան, չլվացվող արտադրանքի համար՝ 0,001% -ը, ապա դրանք պետք է նշված լինեն բաղադրության մեջ:

Նանոնյութերի ձեռով առկա բաղադրամասերը պետք է հստակորեն նշված լինեն բաղադրամասերի ցանկում՝ դրանց անունից հետո փակագծերում նշելով «նանո» բառը կամ «nano» բառը, եթե բաղադրամասերը նշվում են Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան:

Այն բաղադրամասերը, որոնց կոնցենտրացիան 1%-ից պակաս է, կարող են թվարկվել ցանկացած հերթականությամբ այն բաղադրամասերից հետո, որոնց կոնցենտրացիան 1%-ից ավելի է:

Ներկանյութերը կարող են թվարկվել ցանկացած հերթականությամբ մնացած բաղադրիչներից հետո՝ գույնի ինդեքսին կամ ընդունված նշագրերին համապատասխան:

Բաղադրամասերի ցանկը կարող է ներկայացված լինել կամ ՄՄ այն անդամ պետությունների պետական կամ պաշտոնական լեզվով (լեզուներով), որտեղ իրականացվում է օժանելիքակոսմետիկական արտադրանքի իրացումը, կամ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան՝ օգտագործելով լատինական այբուբենի տառերը:

Որպես տարբեր երանգների սերիա թողարկված դեկորատիվ կոսմետիկայի արտադրատեսակների վրա կարող են թվարկվել սերիայում օգտագործված բոլոր ներկանյութերը՝ կիրառելով «կարող է պարունակել» եզրույթը կամ (+/-) նշանը:

9.4. Սույն հոդվածի 9.2 հոդվածով նախատեսված տեղեկությունները պետք է լինեն հստակ եւ փաթեթվածքից չջնջվող արտադրանքն ըստ նշանակության օգտագործելու պայմաններում:

9.5. Օծանելիքակոսմետիկական արտադրանքի մասին սույն հոդվածի 9.2. հոդվածով նախատեսված տեղեկությունները ներկայացվում են ՄՄ այն անդամ պետությունների պետական լեզվով (լեզուներով), որտեղ իրականացվում է օծանելիքակոսմետիկական արտադրանքի իրացումը:

Արտադրողի անվանումը, արտադրողի գտնվելու վայրը եւ արտադրանքի անունը կարող են գրվել լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ: Օծանելիքակոսմետիկական արտադրանքի ծագման երկիրը նշվում է ՄՄ այն անդամ պետությունների պետական, պաշտոնական լեզվով (լեզուներով), որտեղ իրականացվում է օծանելիքակոսմետիկական արտադրանքի իրացումը:

Հոդված 6. Համապատասխանության գնահատումը

1. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին օծանելիքակոսմետիկական արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է ՄՄ անդամ պետություններում սահմանված կարգով գրանցված՝ արտադրանքը արտադրողի (արտադրողի լիազոր ներկայացուցչի կամ ներմուծողի) կողմից:

2. Օծանելիքակոսմետիկական արտադրանքի համապատասխանության գնահատումը, բացառությամբ այն օծանելիքակոսմետիկական արտադրանքի, որի ցանկը ներկայացված է 12-րդ հավելվածում, իրականացվում է ՄՄ անդամ պետություններում սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ստացված ապացույցների եւ սեփական ապացույցների հիման վրա համապատասխանությունը հայտարարագրման ձեւով հաստատելու միջոցով:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգին օծանելիքակոսմետիկական

արտադրանքի համապատասխանության հայտարարագիրը եւ արտադրանքի պետական գրանցման վկայականը ձեւակերպվում են միեւնույն անվանմամբ արտադրանքի մեկ կամ մի քանի անվան համար եւ գործում են մինչեւ արտադրանքի անվան եւ (կամ) բաղադրագրի մեջ այնպիսի փոփոխություններ կատարելը, որոնք հանգեցնում են անվտանգության ցուցանիշների փոփոխության:

3. Այն օժանդակապատասխանության արտադրանքի համապատասխանության գնահատումը, որի ցանկը ներկայացված է 12-րդ հավելվածում, իրականացվում է պետական գրանցման միջոցով՝ տալով արտադրանքի պետական գրանցման վկայական:

4. Մաքսային միության տարածքում պատրաստվող օժանդակապատասխան արտադրանքի պետական գրանցումն իրականացվում է դրա արտադրության կազմակերպման փուլում, իսկ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող օժանդակապատասխան արտադրանքի պետական գրանցումն իրականացվում է նախքան դրա ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք:

Արտադրանքի պետական գրանցումն իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ոլորտում Կողմի կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ գրանցման մարմին):

Պետական գրանցման վկայականի տրման համար հայտատուն (արտադրողը, արտադրողի լիազոր ներկայացուցիչը, ներմուծողը) ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

– հայտ.

– այն փաստաթղթերի՝ հայտատուի կողմից վավերացված պատճենները, որոնց համապատասխան արտադրանքը պատրաստվում է (տեխնիկական փաստաթղթեր եւ (կամ) օժանդակապատասխան արտադրանքի բաղադրության մեջ ներառված բաղադրամասերի ցանկը՝ 2-ից 5-րդ

հավելվածներում ներկայացված բաղադրամասերի կոնցենտրացիայի նշումով)։

– հայտատուի գրավոր ծանուցումն առ այն, որ իր կողմից պատրաստվող արտադրանքը համապատասխանում է այն փաստաթղթերի պահանջներին, որոնց համապատասխան այն պատրաստվում է։ Որպես ծանուցում ընդունվում է արտադրանքի՝ արտադրողի կողմից վավերացված որակի հավաստագիրը կամ արտադրողի նամակը։

– արտադրանքի օրգանոլեպտիկ եւ ֆիզիկաքիմիական ցուցանիշները պարունակող փաստաթղթերի՝ հայտատուի կողմից վավերացված պատճենները։

Եթե արտադրողն օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ օգտագործում է նանոնյութեր, ապա անհրաժեշտ է ներկայացնել նանոնյութի վերաբերյալ տեղեկություններ՝ ներառյալ դրա անունը, մասնիկների չափսերը, ինչպես նաեւ ֆիզիկական եւ քիմիական հատկությունները։

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի սպառողական տարայի մակնշման օրինակը, որով հաստատվում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին համապատասխանությունը։

– հայտագրված սպառողական հատկությունները (եթե արտադրողը հայտագրում է դրանք արտադրանքի մակնշվածքում) պարունակող անոտացիա, արտադրանքն օգտագործելիս հատուկ նախազգուշական միջոցներ (անհրաժեշտության դեպքում) եւ տեղեկություններ օժանելիքակոսմետիկական արտադրանքի օգտագործման այն եղանակների մասին, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել սպառողի կողմից օժանելիքակոսմետիկական արտադրանքի ոչ ճիշտ օգտագործմանը։

– ուսումնասիրությունների (փորձարկումների) արձանագրությունները կամ հիգիենիկ փորձաքննության ակտերը կամ գիտական հաշվետվությունները կամ փորձագիտական եզրակացությունները՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 3-ից 6-րդ կետերի պահանջներին համապատասխանության

վերաբերյալ՝ ստացված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)։

– արտադրողի փաստաթուղթը արտադրության՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներին համապատասխանության վերաբերյալ (արտադրողի գրավոր ծանուցումն առ այն, որ արտադրությունը համապատասխանում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, կամ արտադրողի հայտարարագիրը (հայտարարությունը կամ գրավոր ծանուցումը)՝ GMP սկզբունքները պահպանելու վերաբերյալ, կամ որակի կառավարման համակարգին համապատասխանության սերտիֆիկատ կամ պատշաճ արտադրական գործելակերպի (GMP) սկզբունքներին օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության համապատասխանության սերտիֆիկատ)։

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ սպառողական տարայի մակնշման մեջ ներկայացված սպառողական հատկությունները (հակամանրէային ազդեցություն, կնճիռների դեմ, SPF-գործոն, բերանի խոռոչի հիգիենայի միջոցների հակակարիոզ, հակաբորբոքային ազդեցություն եւ այլն) հաստատող՝ հայտատուի կողմից վավերացված փաստաթղթերը։

օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ սպառողական հատկությունների հաստատումը կարող է իրականացվել՝ կամավորների վրա փորձարկման միջոցով եւ (կամ) օրինակելի նմուշների վրա իրականացվող փորձարկումների միջոցով եւ (կամ) գործիքային մեթոդների օգնությամբ եւ (կամ) օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ ներառված բաղադրամասերի վերաբերյալ գիտական տվյալների հիման վրա։

– քաղվածք՝ իրավաբանական անձանց միասնական պետական ռեեստրից կամ անհատ ձեռնարկատերերի միասնական պետական ռեեստրից։

Արտադրողի փաստաթղթերի թարգմանություններն օտար լեզվից ՄՄ անդամ պետության պետական լեզու պետք է վավերացվեն նոտարի կողմից կամ

թարգմանչի ստորագրությամբ՝ կցելով վերջինիս որակավորումը հաստատող դիպլոմի պատճենը:

Արտադրանքի անվտանգությունը հաստատող փաստաթղթի տրման նպատակով տրամադրված փաստաթղթերի արժանահավատության համար պատասխանատվություն է կրում հայտատուն:

Պետական գրանցում անցած օժանելիքակոսմետիկական արտադրանքի վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են պետական գրանցման վկայականների միասնական ռեեստր:

Պետական գրանցումը կարող է մերժվել Մաքսային միության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Պետական գրանցումը կարող է դադարեցվել գրանցում իրականացնող մարմնի կողմից Մաքսային միության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

5. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին օժանելիքակոսմետիկական արտադրանքի համապատասխանության հայտարարագրի ընդունման համար հայտատուն (արտադրողը, արտադրողի լիազոր ներկայացուցիչը կամ ներմուծողը) պետք է ունենա հետևյալ փաստաթղթերը արտադրանքի յուրաքանչյուր անվան համար.

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ ներառված բաղադրամասերի ցանկը՝ 2-ից 5-րդ հավելվածներում ներկայացված բաղադրամասերի կոնցենտրացիայի նշումով.

– արտադրանքի օրգանոլեպտիկ եւ ֆիզիկաքիմիական ցուցանիշները պարունակող փաստաթղթերի՝ հայտատուի կողմից վավերացված պատճենները:

– ուսումնասիրությունների (փորձարկումների) արձանագրությունները կամ հիգիենիկ փորձաքննության ակտերը կամ գիտական հաշվետվությունները կամ փորձագիտական եզրակացությունները՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 3-ից 6-րդ կետերի պահանջներին համապատասխանության

վերաբերյալ՝ ստացված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)։

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի սպառողական տարայի մակնշման օրինակը, որով հաստատվում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներին համապատասխանությունը։

– արտադրողի փաստաթուղթը արտադրության՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներին համապատասխանության վերաբերյալ (արտադրողի գրավոր ծանուցումն առ այն, որ արտադրությունը համապատասխանում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, կամ արտադրողի հայտարարագիրը (հայտարարությունը կամ գրավոր ծանուցումը)՝ GMP սկզբունքները պահպանելու վերաբերյալ, կամ որակի կառավարման համակարգին համապատասխանության սերտիֆիկատ կամ պատշաճ արտադրական գործելակերպի (GMP) սկզբունքներին օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության համապատասխանության սերտիֆիկատ)։

– օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ սպառողական տարայի մակնշման մեջ ներկայացված սպառողական հատկությունները (հակամանրէային ազդեցություն, կնճիռների դեմ, SPF-գործոն, բերանի խոռոչի հիգիենայի միջոցների հակակարիոզ, հակաբորբոքային ազդեցություն եւ այլն) հաստատող՝ հայտատուի կողմից վավերացված փաստաթղթերը։

Օժանելիքակոսմետիկական արտադրանքի՝ սպառողական հատկությունների հաստատումը կարող է իրականացվել՝ կամավորների վրա փորձարկման միջոցով եւ (կամ) օրինակելի նմուշների վրա իրականացվող փորձարկումների միջոցով եւ (կամ) գործիքային մեթոդների օգնությամբ եւ (կամ) օժանելիքակոսմետիկական արտադրանքի բաղադրության մեջ ներառված բաղադրամասերի վերաբերյալ գիտական տվյալների հիման վրա։

Արտադրողի փաստաթղթերի թարգմանություններն օտար լեզվից ՄՄ անդամ պետության պետական լեզու պետք է վավերացվեն նոտարի կողմից կամ թարգմանչի ստորագրությամբ՝ կցելով վերջինիս որակավորումը հաստատող դիպլոմի պատճենը:

6. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգին օժանելիքակոսմետիկական արտադրանքի համապատասխանության հայտարարագիրը տրամադրվում է սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հաստատման)) հավատարմագրված մարմնին:

Հոդված 7. Մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով

1. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող եւ 6-րդ հոդվածի համաձայն՝ սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանության գնահատման ընթացակարգով անցած օժանելիքակոսմետիկական արտադրանքը պետք է ունենա Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում:

2. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումն իրականացվում է նախքան արտադրանքը շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի յուրաքանչյուր միավորի (սպառողական տարայի, ապրանքապիտակի, պիտակի) եւ (կամ) ապրանքաուղեկցող փաստաթղթերի վրա:

ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է ցանկացած ձեռով, որով ապահովվում է հստակ եւ պարզ պատկեր օժանելիքակոսմետիկական արտադրանքի պիտանիության

ժամկետի ամբողջ ընթացքում:

Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը

1. ՄՄ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները մարդու կյանքի եւ առողջության համար վտանգ ներկայացնող օժանելիքակոսմետիկական արտադրանքը ՄՄ մասնակից պետության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաեւ շուկայից հանելու համար:

2. ՄՄ անդամ պետության իրավասու մարմինը պարտավոր է տեղեկացնել ՄՄ հանձնաժողովին եւ ՄՄ մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին կայացված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումը կայացնելու պատճառները եւ տրամադրելով տվյալ միջոցն ընդունելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

3. Եթե ՄՄ մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններն առարկություն են հայտնում սույն հոդվածի 1-ին կետում նշված որոշման դեմ, ապա ՄՄ հանձնաժողովն անհապաղ խորհրդակցություններ է կազմակերպում ՄՄ բոլոր անդամ պետությունների իրավասու մարմինների հետ՝ փոխադարձ ընդունելի որոշում կայացնելու համար:

Հոդված 9. Պետական վերահսկողությունը

ՄՄ անդամ պետության տարածքում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման պետական վերահսկողությունն իրականացվում է ՄՄ տվյալ անդամ պետությունում օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

«Օժանելիքակոսմետիկական
արտադրանքի անվտանգության
մասին» ՄՄ տեխնիկական
կանոնակարգի
ՄՄ ՏԿ 009/2011

ՑԱՆԿ

օժանելիքակոսմետիկական
արտադրանքում օգտագործման
համար արգելված նյութերի

Նյութի անվանումը հայերենով	Նյութի անվանումը՝ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան
1. N-5-քլորբենզօքսազոլ-2-իլացետամիդ (Cas համարը՝ 35783-57-4)	N-5-Chlorobenzoxazol-2-ylacetamide (Cas No 35783-57-4),
2. 2-ացետօքսիլէթիլտրիմէթիլամոնիումի հիդրօքսիդ (ացետիլխոլին) եւ դրա աղերը (Cas համարը՝ 51-84-3, EC համարը՝ 200-128-9)	2-Acetoxyethyl trimethyl ammonium hydroxide (acetylcholine) and its salts (Cas No 51-84-3, EC № 200-128-9)
3. Դեանոլացեղումատ (Cas համարը՝ 3342-61-8, EC համարը՝ 222-085-5)	Deanol aceglumate (Cas No 3342-61-8, EC № 222-085-5)
4. Սպիրոնոլակտոն (Cas համարը՝ 52-01-7, EC համարը՝ 200-133-6)	Spironolactone (Cas No 52-01-7, EC № 200133-6)
5. [4-(4-հիդրօքսի-3-յոդֆենօքսի)-3,5-դիյոդֆենիլ] քացախաթթու (Տիրատրիկոլ) եւ դրա աղերը (Cas համարը՝ 51-24-1, EC համարը՝ 200-086-1)	[4-(4-Hydroxy-3 -iodophenoxy)-3,5 - diiodophenyl] acetic acid (Tiratricol) and its salts (Cas No 51-24-1, EC № 200-086-1)
6. Մեթոտրեկսատ (Cas համարը՝ 59-05-2, EC համարը՝ 200-4138)	Methotrexate (Cas No 59-05-2, EC № 200-4138)
7. Ամինոկապրոնաթթու եւ դրա աղերը (Cas	Aminocaproic acid and its salts (Cas No

Նյութի անվանումը հայերենով	Նյութի անվանումը՝ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան
համարը՝ 60-32-2, EC համարը՝ 200-469-3)	60-322, EC № 200-469-3)
8. Ցինկոֆեն, դրա աղերը, ածանցյալները եւ այդ ածանցյալների աղերը (Cas համարը՝ 132-60-5, EC համարը՝ 205-067-1)	Cinchophen, its salts, derivatives and salts of these derivatives (Cas No 132-60-5, EC № 205067-1)
9. Թիրոպրոպիաթթու եւ դրա աղերը (Cas համարը՝ 51-26-3)	Thyropropic acid and its salts (Cas No 51-26-3)
10. Տրիքլորքացախաթթու (Cas համարը՝ 76-03-9, EC համարը՝ 200-927-2)	Trichloroacetic acid (Cas No 76-03-9, EC № 200-927-2)
11. Ակոնիտի տերեւներ, արմատներ եւ գալենային խառնուրդներ (Cas համարը՝ 84603-50-9, EC համարը՝ 283-252-6)	Aconitum napellus L. (leaves, roots and galenical mixtures) (Cas No 84603-50-9, EC № 283-252-6)
12. Ակոնիտին (ակոնիտում նապելլուսի հիմնական ալկալոիդ) եւ դրա աղերը (Cas համարը՝ 302-27-2, EC համարը՝ 206-121-7)	Aconitine (principal alkaloid of Aconitum napellus L.) and its salts (Cas No 302-27-2, EC № 206-121-7)
13. Ադոնիս եւ դրա խառնուրդները (կուժկոտրուկ գարնանային) (Cas համարը՝ 84649-73-0, EC համարը՝ 283-458-6)	Adonis vernalis L. and its mixtures (Cas No 84649-73-0, EC № 283-458-6)
14. Էպինեֆրին (Cas համարը՝ 51-43-4, EC համարը՝ 200-0987)	Epinephrine (Cas No 51-43-4, EC № 200-0987)
15. Օձային ռաուվոլֆիայի ալկալոիդներ եւ դրանց աղերը (Cas համարը՝ 90106-13-1, EC համարը՝ 290-234-1)	Rauwolfia serpentina alkaloids and their salts (Cas No 90106-13-1, EC № 290-234-1)
16. Ալկինային սպիրտներ, դրանց պարզ եւ բարդ եթերներն ու աղերը	Alkyne alcohols, their esters, ethers and salts
17. Իզոպրենալին (Cas համարը՝ 7683-59-2, EC համարը՝ 231-687-7)	Isoprenaline (Cas No 7683-59-2, EC № 231-687-7)
18. Ալիլ իզոթիոցիանատ (Cas համարը՝ 57-06-7, EC համարը՝ 200-309-2)	Allyl isothiocyanate (Cas No 57-06-7, EC № 200-309-2)
19. Ալոկլամիդ եւ դրա աղերը (Cas համարը՝ 5486-77-1)	Alloclamide and its salts (Cas No 5486-77-1)
20. Նալոֆրին, դրա աղերը եւ եթերները (Cas համարը՝ 62-679, EC համարը՝ 200-546-1)	Nalorphine, its salts and ethers (Cas No 62-679, EC № 200-546-1)

Նյութի անվանումը հայերենով	Նյութի անվանումը՝ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան
21. Սիմպաթոմիմետիկ ամիններ, որոնք ազդում են կենտրոնական նյարդային համակարգի վրա (Cas համարը՝ 300-62-9, EC համարը՝ 206-096-2)	Sympathicomimetic amines acting on the central nervous system: any substance contained in the first list of medicaments which are subject to medical prescription and are referred to in reglament (Cas No 300-62-9, EC № 206-096-2)
22. Անիլին, դրա աղերը, հալոգենացված և սուլֆացված ածանցյալները (Cas համարը՝ 62-53-3, EC համարը՝ 200539-3)	Aniline, its salts and its halogenated and sulphonated derivatives (Cas No 62-53-3, EC № 200-539-3)
23. Բետոքսիկաին և դրա աղերը (Cas համարը՝ 3818-62-0)	Betoxycaine and its salts (Cas No 3818-62-0)
24. Զօքսազոլամին (Cas համարը՝ 61-80-3, EC համարը՝ 200519-4)	Zoxazolamine (Cas No 61-80-3, EC № 200519-4)
25. Պրոկաինամիդ, դրա աղերը և ածանցյալները (Cas համարը՝ 51-06-9, EC համարը՝ 200-078-8)	Procainamide, its salts and derivatives (Cas No 51-06-9, EC № 200-078-8)
26. Բենզիդին (Cas համարը՝ 92-87-5, EC համարը՝ 202-199-1)	Benzidine (Cas No 92-87-5, EC № 202-199-1)
27. Տուամինոհեպտան, դրա իզոմերները և աղերը (Cas համարը՝ 123-82-0, EC համարը՝ 204-655-5)	Tuaminoheptane, its isomers and salts (Cas No 123-82-0, EC № 204-655-5)
28. Օկտոդրին և դրա աղերը (Cas համարը՝ 543-82-8, EC համարը՝ 208-851-1)	Octodrine and its salts (Cas No 543-82-8, EC № 208-851-1)
29. 2-ամինո-1,2-բիս-(4-մեթօքսիֆենիլ) էթանոլ և դրա աղերը (Cas համարը՝ 530-34-7)	2-Amino-1,2-bis (4-methoxyphenyl)ethanol and its salts (Cas No 530-34-7)
30. 1,3-դիմեթիլպենտիլամին և դրա աղերը (Cas համարը՝ 105-41-9, EC համարը՝ 203-296-1)	1,3-Dimethylpentylamine and its salts (Cas No 105-41-9, EC № 203-296-1)
31. 4-Ամինոսալիցիլաթթու և դրա աղերը (Cas համարը՝ 65-49-6, EC համարը՝ 200-613-5)	4-Aminosalicylic acid and its salts (Cas No 6549-6, EC № 200-613-5)
32. Տոլուիդիններ, դրանց իզոմերները, աղերը, հալոգենացված և սուլֆացված	Toluidines, their isomers, salts and halogenated and sulphonated derivatives

Նյութի անվանումը հայերենով	Նյութի անվանումը՝ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան
ածանցյալները (Cas համարը՝ 26915-12-8, EC համարը՝ 248-105-2)	(Cas No 26915-128, EC № 248-105-2)
33. Քսիլիդիններ, դրանց իզոմերները, աղերը, հալոգենացված եւ սուլֆացված ածանցյալները (Cas համարը՝ 1300-73-8, EC համարը՝ 215-091-4)	Xylidines, their isomers, salts and halogenated and sulphonated derivatives (Cas No 1300-738, EC № 215-091-4)
34. Իմպերատորին 9-(3-մեթօքսիլբութ-2-ենիլօքսի)-ֆուրո-[3,2-g]-քրոմեն-7-ոն (Cas համարը՝ 482-44-0, EC համարը՝ 207-581-1)	Imperatorin 9-(3-methoxybut-2-enyloxy)-furo (3,2-g) chromen-7-one (Cas No 482-44-0, EC № 207-581-1)
35. Ամմի մեծ եւ դրա գալենային խառնուրդները (Cas համարը՝ 90320-46-0, EC համարը՝ 291-072-4)	Ammi majus and its galenical mixtures (Cas No 90320-46-0, EC № 291-072-4)
36. 2-մեթիլ-2,3-դիքլորբութան (Cas համարը՝ 507-45-9)	2,3-dichloro-2-methylbutane (Cas No 507-45-9)
37. Անդրոգեն ազդեցությամբ նյութեր	Substances with androgenic effect
38. Անտրացենային յուղ (Cas համարը՝ 120-12-7, EC համարը՝ 204-371-1)	Anthracene oil (Cas No 120-12-7, EC № 204371-1)
39. Հակաբիոտիկներ	Antibiotics
40. Ծարիր եւ դրա միացությունները (Cas համարը՝ 7440-36-0, EC համարը՝ 231-146-5)	Antimony and its compounds (Cas No 7440-36-0, EC № 231-146-5)
41. Շնամեռուկ կանեփանման եւ դրա խառնուրդները (Cas համարը՝ 8460351-0, EC համարը՝ 283-253-1)	Apocynum cannabinum L. and its mixtures (Cas No 84603-51-0, EC № 283-253-1)
42. Ապոմորֆին (R5,6, 6a, 7-տետրահիդրո-6-մեթիլ-4H- դիբենզո[de, g]քինոլին-10,11-դիոլ) եւ դրա աղերը (Cas համարը՝ 58-00-4, EC համարը՝ 200-360-0)	Apomorphine (5, 6, 6a, 7-tetrahydro-6-methyl- 4H-dibenzo [de,g]-quinoline-10,11-dihydric alcohol) and its salts (Cas No 58-00-4, EC № 200-360-0)
43. Արսենի եւ դրա միացությունները (Cas համարը՝ 7440-382, EC համարը՝ 231-148-6)	Arsenic and its compounds (Cas No 7440-38-2, EC № 231-148-6)
44. Ատրոպա բելլադոննա եւ դրա պատրաստուկները (Cas N 8007-93-0, EC համարը՝ 232-365-9)	Atropa belladonna L. and its preparations (Cas No 8007-93-0, EC № 232-365-9)
45. Ատրոպին, դրա աղերը եւ ածանցյալները (Cas համարը՝ 51-55-8, EC	Atropine, its salts and derivatives (Cas No

Նյութի անվանումը հայերենով	Նյութի անվանումը՝ Կոսմետիկական բաղադրամասերի միջազգային անվանացանկին (INCI) համապատասխան
համարը՝ 200-104-8)	5155-8, EC № 200-104-8)
